

Սեպտեմբեր 26, 1980

Ազնուամայլ
Տիկին Խավուճեան
Նիւ Եորք.

Միրելի Տիկին Խավուճեան,

Ենորհակալութեամբ ստացանք Սուրբ Վարդան Մայր Տաճարի
Թանգարանին ձեր նուիրած հետեւեալ ձեռագործ զեղեցիկ կը-
տորները.

- Մէկ բարձի երես՝ հիւսուած ձեր հանգուցեալ մօր կողմէ
- Երկու բարձի երես՝ հիւսուած ձեր կողմէ
- Երեք կտոր հիւսուած ժպաւէն
- Երկու կտոր ``քրօշէ`` հիւսուածք

Այս թանկագին նուէրները Մայր Տաճարի Թանգարանի արժե-
քաւոր կտորներու հաւաքածոյին կարգին անցան:

Ձեզի կը մաղթենք առողջ եւ երկար օրեր:

Ազօթարար

Եզնիկ Աբղ. Պալեան
Լուսարարապետի Տեղապահ